ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Արմավիրի մարզ, Մեծամոր քաղաք, Վարչական կենտրոն, շ.1, Հեռ. 060656505 , info@mecamor.am

N **04888**
31 հոկտեմբեր 2024 թ.

«ԿԱՊԻՏԱԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
Հ/Մ ՏՆՕՐԵՆ
Ս. ԿՈՎԱԼԵՆԿՈՒՆ

Հարգելի գործընկեր՝

Մեծամորի համայնքապետարանի կարիքների համար 2024 թվականի օգոստոսի 22-ին հայտարարված ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Նոր Կեսարիա բնակավայրի մշակույթի տան շենքի գազաֆիկացման համակարգի կառուցման աշխատանքների ձեռքբերման ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-24/107 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակներում ընտրված (հաղթող) մասնակից է ճանաչվել «Կապիտալ գրուպ» ՍՊԸ-ի Հայաստանյան մասնաճյուղը և 19.09.2024թ-ին Ձեզ հետ կնքվել է ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-24/107 ծածկագրով կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

22.10.2024թ.-ին «Կապիտալ գրուպ» ՍՊԸ Հայաստանյան մասնաճյուղի կողմից ներկայացվել է գրություն, համաձայն որի ընկերությունը ի վիճակի չի իրականացնել պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ ֆինանսական խնդիրների պատճառով և խնդրում է լուծարել պայմանագիրը:

Հաշվի առնելով վերոգրյալը, սույնով տեղեկացնում ենք Ձեզ, որ Պայմանագիրը 2024 թվականի հոկտեմբերի 29-ից միակողմանի ամբողջապես լուծվել է:

Միաժամանակ, հայտնում ենք, որ սույն Պայմանագրի շրջանակում սահմանված կարգով Ձեր կողմից ներկայացվել է որակավորման և պայմանագրի կատարման

ապահովումներ՝ միակողմանի հաստատված տուժանքների տեսքով, համապատասխանաբար, որակավորման ապահովում՝ 178,979.00 (մեկ հարյուր յոթանասունութ հազար ինը հարյուր յոթանասունինը) ՀՀ դրամի չափով և պայմանագրի կատարման ապահովում՝ 119,319.00 (մեկ հարյուր տասնինը հազար երեք հարյուր տասնինը) ՀՀ դրամի չափով:

Խնդրում ենք ապահովել նշյալ որակավորման և պայմանագրի կատարման ապահովումներով նշված գումարների վճարումը՝ Մեծամորի համայնքապետարանի ՀՀ ՖՆ գործառնական վարչությունում բացված 900332239392 հաշվեհամարին:

Տեղեկացնում ենք նաև, որ վերոնշյալի կապակցությամբ Մեծամորի համայնքապետարանը դիմել է Ձեզ սպասարկող բանկին՝ «Արդշինբանկ» ՓԲԸ-ին:

Միաժամանակ հայտնում ենք, որ վերոնշյալ գանձումների անհնարինության դեպքում Մեծամորի համայնքապետարանը վերոգրյալի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրելու է լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները կիրառելու նպատակով:

Հարգանքով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Կատ. Ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժնի պետ՝ Ն. Հակոբյան
+37498393676